


# ԱՄՆ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԶԵԿՈՒՅՑ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ՄԱՍԻՆ 2019Թ.

### ՀԱՅԱՍՏԱՆ (ԽՈՒՄԲ II)

*20 հունիսի, 2019թ.*

Հայաստանի կառավարությունն ամբողջությամբ չի բավարարում թրաֆիքինգի վերացման նվազագույն չափանիշներին, սակայն նշանակալի աշխատանքներ է իրականացնում այդ ուղղությամբ: Նախորդ հաշվետու ժամանակահատվածի համեմատ ի ցույց են դրվել ավելի մեծ ջանքեր. այնուհանդերձ, Հայաստանը մնացել է 2-րդ խմբի երկրների շարքում: Ընդհանուր առմամբ Կառավարության կողմից եղել են ավելի շատ ջանքեր. մասնավորապես իրականացվել են իրավապահների ինտենսիվ ուսուցումներ, իրազեկման տարբեր արշավներ, կազմակերպվել է այլ հարցերի շարքում նաև մարդկանց թրաֆիքինգի հարցերով զբաղվող 64 սոցիալական աշխատողների աշխատանքի ընդունման և ուսուցման գործընթացը և նախաձեռնողական մոտեցումների արդյունքում բացահայտվել են հարկադիր աշխատանքի որոշ դրվագներ: Կառավարությունը սակայն մի քանի առանցքային ուղղություններում չի բավարարել նվազագույն ստանդարտներին: Հաշվետու ժամանակահատվածում Կառավարության կողմից որևէ թրաֆիքինգ իրականացնող չի դատապարտվել, իսկ քրեական հետապնդումների թիվը նախորդ տարվա համեմատ նվազել է: Արդեն երրորդ տարին անընդմեջ Կառավարության կողմից ավելի քիչ թվով զոհեր են բացահայտվում, իսկ արձագանքման առաջին օղակում գտնվողները շարունակում են ապավինել է այն բանին, որ զոհերն իրենք ներկայանան, քանի որ չկան խոցելի խմբերի դիտագնման/սրբինինգի ստանդարտ ցուցիչներ: Արդարադատության հասանելիությունը զոհերի համար եղել է ցածր, մասնավորապես՝ բացակայում են զոհակենտրոն ընթացակարգերը և վկա հանդիսացող զոհերի պաշտոնական պաշտպանության միջոցները: Վերաինտեգրման համար անհրաժեշտ ռեսուրսների, այդ թվում՝ միջանկյալ բնակապահովման և խնամատարության բացակայության հետևանքով որոշ զոհեր կրկնակի զոհականացվել են կամ դարձել անօթևան: Հաշվետու ժամանակահատվածում Կառավարության կողմից ոչ մի տեսչական ստուգում աշխատանքի հարցերով չի կատարվել, քանի որ աշխատանքային տեսչության գործառույթների գերակշիռ մասը եղել է կասեցված, ինչն էլ խոչընդոտել է վերջինիս կողմից հարկադիր աշխատանքի բացահայտման, քննության և կանխարգելման կարողությանը:



### ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԱՆԵԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

132 և 132-2 հոդվածների համաձայն իրականացնել խիստ քննություններ, քրեական հետապնդում թրաֆիքինգ իրականացնողների նկատմամբ և դատապարտել նրանց. մշակել ստանդարտ ընթացակարգեր թրաֆիքինգի գոհերի դիտագնանումների/սքրինինգի վերաբերյալ և իրականացնել համապատասխան աշխատակիցների ուսուցում՝ վերհանելու թրաֆիքինգը մարմնավաճառների, միգրանտների, փախստականների և ռիսկային այլ խմբերի շրջանում. մշակել և իրականացնել միջոցառումներ երեխաների խնամքի պետական հաստատություններում մանկական աշխատանքի և երեխաների հնարավոր թրաֆիքինգի կանխարգելման ուղղությամբ. թրաֆիքինգի գործերում գոհակենտրոն մոտեցման դրսևորման հարցերի շուրջ ուսուցումներ ապահովել քննիչների, դատախազների և դատավորների համար, այդ թվում անչափահաս գոհերի մասով և ապահովել խորացված ուսուցումներ թրաֆիքինգի գործերով քննությունների ու քրեական հետապնդումների վերաբերյալ. իրավական լիազորություններ սահմանել ու ներդնել, որոնք թույլ կտան աշխատանքային տեսուչներին կանոնավոր տեսչական ստուգումներ անցկացնել ու բացահայտել գոհերին չհայտարարված ստուգայցերի միջոցով. ավելացնել գոհերի վերահստեգրման ծառայություններին ուղղվող միջոցները. սահմանել արտերկրում գտնվող գոհերին Հայաստան հայրենադարձելու պաշտոնական ընթացակարգ, այդ թվում՝ ձեռնարկել միջոցներ կազմակերպական ծախսերը հոգալու համար. վկա հանդիսացող գոհերի համար ապահովել այն պաշտպանությունները, որոնք սահմանված են Քրեական դատավարության օրենսգրքով և 2016թ. որոշմամբ. լիցենզավորել, կանոնակարգել ու ուսուցում ապահովել տեղական զբաղվածության ծառայությունների և գործակալների համար, որպեսզի նրանք կարողանան օգնել կանխել Հայաստանի քաղաքացիների հարկադիր աշխատանքն արտերկրում. աշխատել Ռուսաստանի իշխանությունների հետ հարկադիր աշխատանքի ՀՀ քաղաքացի գոհերին բացահայտելու և աշխատանքային թրաֆիքինգ իրականացնողների նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու հարցում:

## ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊԵՆԴԱՆՈՒՄ

Իրավապահ տիրույթում Կառավարության ջանքերը պահպանվել են: Քրեական օրենսգրքի 132 և 132-2 հոդվածներով քրեականացվում է թե՛ սեռական, թե՛ աշխատանքային թրաֆիքինգը և այդ հոդվածներով նախատեսվում է 5-ից 8 տարվա ազատազրկում, ինչը բավարար խիստ և համարժեք պատիժ է այնպիսի ծանր հանցանքների համար, ինչպիսին է բռնաբարությունը: Պատկան մարմինները հետաքննել են թրաֆիքինգի 9-ը գործ (2017թ. քննվել էր 6 գործ): Գործերից 5-ն առնչվում են հարկադիր աշխատանքին, իսկ մեկը ներառում էր և՛ սեռական թրաֆիքինգ, և՛ հարկադիր աշխատանք (2017թ. քննվել էր սեռական թրաֆիքինգի 2 գործ և աշխատանքային թրաֆիքինգի 4 գործ): Պատկան մարմինների կողմից մեղադրանք է առաջադրվել մեկ մեղադրյալի՝ հարկադիր աշխատանքի համար (2017թ.-ին մեղադրանք է առաջադրվել 1 հոգու սեռական թրաֆիքինգի, 1 հոգու մուրացկանության դրդելու և 1 հոգու էլ հարկադիր աշխատանքի համար): Դատարանների կողմից որևէ դատապարտում չի եղել (2017թ.-ին սեռական թրաֆիքինգ իրականացնելու համար դատապարտվել է 1 հոգի):

Հայաստանի Ոստիկանության Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության կազմում գործում է Թրաֆիքինգի դեմ պայքարի բաժինը, որը գործի նախնական քննությունից հետո այն ուղեգրում է Քննչական կոմիտեին՝ համակողմանի քննության նպատակով: Ոստիկանության տեղական բաժանմունքներում նույնպես կան պատասխանատու ոստիկաններ, որոնք զբաղվում են թրաֆիքինգի հարցերով իրենց սպասարկման տարածքում: Տեղի քննիչները չէին տիրապետում զոհերին, հատկապես՝ անչափահասներին պատշաճ կերպով հարցաքննելու հմտություններին: Թեպետ ուղեցույցներով մեծահասակների դեպքում հարցաքննության առավելագույն տևողությունը սահմանվում է 4 ժամ, իսկ երեխաներինը՝ 2 ժամ, սակայն դիտորդների հաղորդումների համաձայն եղել են դեպքեր, երբ ոստիկանությունը չափից երկար՝ ընդհուպ մինչև 10 ժամ հարցաքննել է զոհերին, այդ թվում՝ երեխաներին: Քննչական կոմիտեն իր 5 մարզային կենտրոններում ձևավորել է հարցաքննության 20 մանկական սենյակներ, իսկ Թրաֆիքինգի դեմ պայքարի բաժնում հաշվետու ժամանակահատվածում աշխատանքի է ընդունվել կին ոստիկան, սակայն որոշ ընթացակարգերի ժամանակ դեռևս ապահովված չեն սեռազգայուն մոտեցումներ, օրինակ՝ կին զոհերի դեպքում միջամտողական բուժզննումների անցկացումը կին բուժաշխատողների կողմից:

Դիտորդները շարունակում էին փաստել, որ Քննչական կոմիտեն և Գլխավոր դատախազությունը տեղամասային ոստիկանների կողմից թրաֆիքինգի հատկանիշներով հարուցված գործերի մեծ մասը կարճում էին՝ ապացույցների բացակայության հիմքով: Այսպես՝ 2 գործ կարճվել է, իսկ մեկը վերաորակավորվել (2017թ. կարճվել է 1 և վերաորակավորվել 2 գործ): Քաղաքացիական հասարակության հաղորդումների համաձայն կար լավ համագործակցություն Թրաֆիքինգի դեմ պայքարի բաժնի և Քննչական կոմիտեի քննիչների հետ:

Կառավարությունը թրաֆիքինգի հարցերով ուսուցումներ է ապահովել 208 ոստիկանների, Քննչական կոմիտեի 50 քննիչների և քրեակատարողական հաստատությունների 540 աշխատակիցների համար: Կառավարության կողմից նաև ուսուցում է ապահովվել 198 քաղաքացիական ծառայողների համար, որոնք պայքարում են թրաֆիքինգի հարցերում պաշտոնեական հանցակցության դեմ: Կառավարության կողմից թրաֆիքինգին առնչվող հանցանքներում պետական պաշտոնյաների հանցակցության մասին քննությունների, հետապնդումների ու դատապարտումների մասին հաղորդումներ չեն եղել: Ռուսաստանի հետ կապված հարկադիր աշխատանքի գործերի քննությունը շարունակում էր խնդրահարույց լինել, քանի որ հայ քննիչները շարունակում էին իրավապահների հետ համագործակցության հարցում դժվարությունների բխվել: Նույն կերպ, Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը շարունակում էր խոչընդոտել իրավապահ ու զոհերին աջակցելու աշխատանքներին Թուրքիային առնչվող գործերի մասով:

## ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Թրաֆիքինգի բացահայտված զոհերի պաշտպանությանն ուղղված Կառավարության ջանքերը թեթևակի ավելացել են: Բացահայտվել է 9 զոհ (2017թ.՝ 13 զոհ): Ձոհերից 8-ը ենթարկվել են հարկադիր աշխատանքի, 1-ը և՛ սեռական թրաֆիքինգի, և՛ հարկադիր աշխատանքի (2017թ.՝ 8 սեռական թրաֆիքինգի և 5 հարկադիր աշխատանքի զոհ). և՛ 2017, և 2018 թթ. կային 2 անչափահաս զոհ. զոհերից 4-ն օտարերկրացի էին (2017թ. օտարերկրացի չկար). 8 տղամարդ և մեկ կին (2017թ.՝ 10 կին և 3 տղամարդ): Նույնացման, աջակցության և ուղղորդման ընթացակարգերը համապատասխան դերակատարների համար սահմանված են Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման ու աջակցության մասին 2014թ. օրենքով: Առաջին օղակի աշխատողները չէին օգտագործում խոցելի խմբերի բնակչության դիտագնման/սրբինինգի ստանդարտ ցուցիչներ, իսկ փորձագետները շարունակում էին մատնանշել, որ չկար նախաձեռնողական մոտեցում բացահայտման հարցերում և Կառավարությունը հիմնվում էր այն բանի վրա, որ զոհերը ինքնաբացահայտվելու են: Այնուհանդերձ, Թրաֆիքինգի դեմ պայքարի բաժնի նախաձեռնողական ջանքերով բացահայտվել է հարկադիր աշխատանքի 4 զոհ, իսկ Միգրացիոն ծառայության կողմից թրաֆիքինգի ցուցիչներով զննում են անցել ապաստան հայցող 203 անձ: «Նախնական նույնացման փուլում», որը հնարավոր զոհի մասին տվյալների հավաքման փուլն է և առավելագույնը կարող է տևել 10-ն օր, հնարավոր զոհերի համար Կառավարությունն ապահովում էր ժամանակավոր կացարան, անհետաձգելի բուժօգնություն և հոգեբանական աջակցություն: Ձոհերի նույնացման հանձնաժողովը, որի կազմում կան ներկայացուցիչներ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից, Գլխավոր դատախազությունից, Ոստիկանությունից և ՀԿ-ներից, պաշտոնապես մարդկանց թրաֆիքինգի զոհ է ճանաչել հիմնվելով այն տեղեկությունների վրա, որոնք ձեռք են բերվել «նախնական նույնացման փուլում»: Քաղաքացիական հասարակության հաղորդամբ ուղղորդման մեխանիզմները լավ են գործել և եղել է դրական համագործակցություն Կառավարության հետ:

Կառավարությունը գոհերի պաշտպանության համար ն՝ 2017, ն՝ 2018թթ. հատկացրել է 19.07 ՀՀ դրամ կամ 39.320 ԱՄՆ դոլար, որը ներառում է ՀԿ-ի կողմից գործարկվող ապաստարանի գործառնական ծախսերը: Կառավարությունը և տեղական ՀԿ-ները համատեղ գոհերին ապահովել են իրավական, հոգեբանական աջակցություն և բուժօգնություն, ապաստարան, միանվագ դրամական փոխհատուցում 250.000 ՀՀ դրամի կամ 515 ԱՄՆ դոլարի չափով և ներգրավել են նրանց տարբեր սոցիալական, կրթական և զբաղվածության ծրագրերում: Կառավարությունն առաջարկել է անվճար բուժօգնություն. սակայն իրավական խորհրդատվության հարցում, այդ թվում՝ փաստաբանների ծախսերը հոգալու մասով, հիմնվել է ՀԿ-ների աշխատանքի վրա: Բուժօգնություն ապահովվել է 3 գոհի համար (2017թ.՝ 2), 6 գոհ ստացել է միանվագ դրամական փոխհատուցում (2017թ.՝ 5), իսկ 5 հոգի ստացել են իրավական խորհրդատվություն (2017թ.՝ 9): Կառավարությունը գոհերին աջակցելու նպատակով պահպանել է համագործակցության համաձայնագիրը և մասնակի ֆինանսավորել է ՀԿ-ի կողմից գործարկվող մեկ մասնագիտացված ապաստարանի. ՀԿ-ի կողմից գործարկվող ապաստարանում աջակցություն են ստացել տարվա ընթացքում նույնացված 3 նոր գոհեր (2017թ.՝ 19 գոհ), իսկ ընդհանուր թիվը կազմել է 41 հոգի (2017թ.՝ 36 հոգի): ՀԿ-ի կողմից գործարկվող ապաստարանում տեղավորված չափահաս գոհերից պահանջվել է առանց ուղեկցության դուրս գալու դեպքում ապաստարանի անձնակազմին տեղյակ պահել այդ մասին, սակայն նրանք ազատ էին իրենց հայեցողությամբ հեռանալ ապաստարանից, եթե աջակցության կարիք այլևս չէին զգում: Պատկան մարմինները օտարերկրացի գոհերի համար ապահովել են նույն ծառայություններն ու աջակցությունը, ինչ Հայաստանի քաղաքացի գոհերի համար: Տղամարդ գոհերը չէին կարող մնալ ապաստարանում և նրանց տեղավորում էին ՀԿ-ի վարձած բնակարաններում. վարձված բնակարաններում 4 գոհ է տեղավորվել: Կառավարությունն աշխատանքի է ընդունել 64 նոր սոցիալական աշխատողների և ապահովել է նրանց ուսուցումը թրաֆիքինգի հարցերի շուրջ, ինչպես նաև արհեստագործական ուսուցումներ է կազմակերպել գոհերի համար: Չնայած այս ջանքերին՝ վերաինտեգրմանն ուղղված աշխատանքների և երկարաժամկետ աջակցության աշխատանքների գերակշիռ մասը դեռևս հոգում է քաղաքացիական հասարակությունը: Միջանկյալ բնակապահովման և վերաինտեգրման հնարավորությունների բացակայությունն ըստ փորձագետների որոշ գոհերի դեպքում հանգեցրել է կրկնագոհականացման ու անօթևանության: Բացի այդ, Կառավարության կողմից թրաֆիքինգի գոհերը չեն ներառվել այն խոցելի խմբերի շարքում, որոնք իրավասու են օգտվել բնակապահովման պետական ծրագրերից: ՀԿ-ի կողմից գործարկվող ապաստարանում և մանկական խնամքի հաստատություններում ընդունել են անչափահաս գոհերին, սակայն փորձագետների հաղորդմամբ երեխաների համար կացարանի և խնամատար ընտանիքների պակաս էր զգացվում, ինչի հետևանքով պատկան մարմինները հաճախ երեխաներին հանձնել են ընտանիքի անդամներին, որոնք ներգրավված էին նրանց շահագործման մեջ: Եվրոպայի խորհրդի մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի փորձագիտական խմբի (GRETA) և ԵԱՀԿ-ի 2017թ. զեկույցներում մատնացույց էին արվում մանկական աշխատանքի ու երեխաների նկատմամբ բռնությունների դրսևորումներ երեխաների խնամքի պետական հաստատություններում. մանկական աշխատանքը երեխաների խնամքի պետական հաստատություններում համարվում է նորմալ երևույթ: Օրենքի համաձայն ՀՀ արտաքին գործերի նախարարությունը լիազորված է համակարգել

արտերկրում գտնվող ՀՀ քաղաքացի զոհերի հայրենադարձումը, սակայն սահմանված ընթացակարգերի և կազմակերպական ծախսերը հոգալու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայությունը խոչընդոտում էին հայրենադարձմանը: 2018թ. Կառավարության կողմից հայրենադարձում չի կատարվել (2017թ. հայրենադարձվել է 3 զոհ): Օրենքի համաձայն օտարերկրացի զոհերն իրավասու են ստանալ մշտական կացության թույլտվություն, սակայն դիմելիս անհրաժեշտ է հաստատում աշխատանքի առկայության մասին:

Դիտորդների հաղորդմամբ եղել են վարչական տուգանքի կիրառման առանձին դիպվածներ սեռական թրաֆիքինգի զոհերի հանդեպ՝ պայմանավորված ոչ համարժեք նույնացմամբ: Որոշ հեռավոր բնակավայրերում իրավապահ աշխատակիցները չէին տիրապետում ինֆորմացիային ու չէին անցել ուսուցում, որպեսզի զոհերին իրազեկեին պաշտպանություն ու աջակցություն ստանալու նրանց իրավունքի մասին: Ձոհերը վարանում էին աջակցել քրեական հետապնդումներին, քանզի ցուցմունք տվող անձի գաղտնիությունը չէր ապահովվում, ինչը թրաֆիքինգ իրականացնողների կողմից հաշվեհարդարի վտանգ էր ստեղծում, ու նաև արատավորում էր նրանց բարի համբավը ընտանիքի ու շրջապատի աչքերում: Իրավասու մարմինները չեն պաշտպանել զոհերի, այդ թվում՝ անչափահասների իրավունքները վարույթների ընթացքում. դատարանում զոհերը, այդ թվում՝ երեխաները միշտ կանգնել են թրաֆիքինգ իրականացնողների առաջ, ինչը կարող ստիպել վերստին վերապրել ողջ տրավման: Կառավարությունը շարունակում էր չունենալ վկա հանդիսացող զոհերի պաշտպանության պաշտոնական ծրագիր: Քրեական դատավարության օրենսգրքով և 2016թ. ընդունված Կառավարության որոշմամբ նախատեսվում է որոշ պաշտպանություն վկա հանդիսացող տուժողների համար, սակայն այս մեխանիզմներից ոչ մեկը 2017 և 2018թթ. չի գործածվել: Օրենքը զոհերին իրավունք է վերապահում հատուցում պահանջել քրեական գործի շրջանակում կամ առանձին քաղաքացիական հայցի միջոցով. 2017 և 2018թթ. որևէ քաղաքացիական հայց զոհերի կողմից չի ներկայացվել: Նախորդ տարիներին դատավորները քաղաքացիական հայցերով փոխհատուցման վճիռներ չեն կայացրել՝ նշելով, որ զոհերը չեն կարողացել հիմնավորել ֆինանսական կորուստներ կրած լինելու հանգամանքը: Օրենքը քննիչներին թույլ էր տալիս արգելանքի տակ վերցնել մեղադրյալի գույքը՝ քաղաքացիական հայցերով վճարումն ապահովելու համար, սակայն գործնականում սա շատ հազվադեպ է կիրառվել:

## **ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ**

Կառավարությունը պահպանել է մարդկանց թրաֆիքինգի կանխարգելմանն ուղղված ջանքերը: Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով նախարարական խորհուրդը և միջգերատեսչական աշխատանքային խումբը շարունակել են 2016-18թթ. գործողությունների ազգային ծրագրի իրականացումը և հրապարակել են կիսամյակային և տարեկան հաշվետվություններ կատարված աշխատանքների վերաբերյալ: Քաղաքացիական հասարակության հաղորդմամբ դրական համագործակցություն է եղել աշխատանքային խմբի անդամների հետ: Դիտորդները փաստում էին, որ Կառավարությունը չի իրականացրել

գործողությունների ազգային ծրագրի առաջընթացի մոնիթորինգ և չի գնահատել այդ աշխատանքների ազդեցությունն ու արդյունքները: Չի եղել աշխատանքի տեղավորման գործակալությունների գործունեությունը վերահսկելու և կանոնակարգելու մեխանիզմ: Իրավական փոփոխությունների արդյունքում աշխատանքային տեսչության գործառույթների գերակշիռ մասը 2015թ. հուլիսից կասեցվել է, տեսուչները չեն կարող պարբերական ստուգումներ անցկացնել և վերհանել հարկադիր աշխատանքը մատնանշող ցուցիչները: Առողջապահության նախարարությունը 2017թ. ձևավորել է Առողջապահական տեսչական մարմինը, սակայն այդ մարմնի գործառույթները սահմանափակվում են աշխատավայրում առողջության պահպանման և անվտանգության ապահովման խնդիրներին ուղղված տեսչական ստուգումներով, և այն իրավասություն չունի կատարել չհայտարարված կամ անսպասելի ստուգումներ: Առողջապահական տեսչական մարմինը 2017 և 2018թթ. որևէ տեսչական ստուգում չի կատարել: Կառավարությունը սահմանել է կարգ, որով բոլոր օտարերկրացիները պարտավոր են ստանալ աշխատանքային թույլտվություն: Կառավարությունը կազմակերպել է իրազեկման մեծացմանն ուղղված քննարկումներ դպրոցներում և իրականացրել է իրազեկման արշավներ, որոնց թիրախում եղել են աշակերտներն ու ուսուցիչները: Կառավարությունը սահմանը հատող, ինչպես նաև Միջին Արևելքում ու Եվրոպայում բնակվող հայերին բաժանել է տեղեկատվական թերթիկներ թրաֆիքինգի վտանգների վերաբերյալ: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հեռուստատեսությամբ հեռարձակել է թրաֆիքինգի հարցերին վերաբերող ամենամյա հաղորդում, իսկ պետական կառույցները թրաֆիքինգի վերաբերյալ տեղեկություններ են զետեղել իրենց կայքերում, այդ թվում տեղեկություններ ոստիկանության և ՀԿ-ների կողմից գործարկվող թեժ գծերի վերաբերյալ. թեժ գծին ստացված զանգերի քանակի մասին Կառավարությունը հաշվետվություն չի ներկայացրել: Կառավարությունը ջանքեր չի գործադրել կոմերցիոն սեռական ակտերի կամ հարկադիր աշխատանքի նկատմամբ պահանջարկը նվազեցնելու ուղղությամբ:

## **ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՐԿՐՈՒՄ**

Ինչպես վերջին 5 տարիների տվյալներն են փաստում, Հայաստանում տեղի է ունենում տեղացի և օտարերկրացի զոհերի շահագործում, իսկ թրաֆիքինգ իրականացնողների կողմից կատարվում է Հայաստանի քաղաքացիների շահագործում արտերկրում: Ռուսաստանում, Միացյալ Արաբական Էմիրություններում (ՄԱԷ) և Թուրքիայում աշխատանք փնտրող հայ միգրանտները բախվում են հարկադիր աշխատանքի խնդրին, որը սովորաբար հետևում է աշխատանքի տեղավորման հետ կապված խաբեություններին և աշխատանքի տեղավորման միջնորդների կողմից միջնորդավճարների չափից մեծ պահանջների ներկայացմանը. ՀՀ քաղաքացի կանայք և երեխաները սեռական թրաֆիքինգի են ենթարկվում ՄԱԷ-ում և Թուրքիայում: ՀՀ քաղաքացի կանայք և երեխաները երկրի ներսում ենթարկվում են սեռական ու աշխատանքային թրաֆիքինգի, նրանց նաև դրդում են հարկադիր մուրացկանության: Որոշ

երեխաներ երկրի ներսում աշխատում են գյուղատնտեսության, շինարարության և ծառայությունների մատուցման ոլորտներում, որտեղ նրանք խոցելի են աշխատանքային թրաֆիքինգի մասով: Գիշերային ակումբներում որպես պարուհիներ աշխատում են ռուսներ, ուկրաինացիներ և բելառուսներ, որոնք խոցելի են սեռական թրաֆիքինգի մասով: Հետզհետե ավելացող հնդիկ միգրանտները, որոնք պատրաստակամորեն աշխատում են սովերային ոլորտում, բախվում է հարկադիր աշխատանքի խնդրին: Մարդկանց թրաֆիքինգի առումով խիստ խոցելի են մնում գյուղական բնակավայրերի կրթական ցածր մակարդակ ունեցող տղամարդիկ և սոցիալական խնամքի հաստատությունների երեխաները: